

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ «ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Սույն թվականի ապրիլի 16—24 օրերին Հունաստանի Թեսաղոնիկե քաղաքի Նեապոլիս արվարձանում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Առաքելություն և ավետարանչություն աշխարհում» հանձնաժողովի հերթական նստաշրջանը, որին հրավիրվել էին ուղղափառ և արևելյան ուղղափառ քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, քննարկելու համար «Եղիցին կամք քո» Քրիստոսավանդ Տերունական աղոթքի իմաստը ներկայիս «ուղղափառ Եկեղեցիների առաքելության» աշխատանքի ոլորտում:

Կիրակի օրը, առավոտյան, նախքան նստաշրջանի բացումը, Նեապոլսի Ս. Ավետման եկեղեցում տեղի ունեցավ սուրբ պատարագի արարողություն: Սուրբ պատարագին ներկա էին, բացի ժողովականներից, նաև հոծ թվով հավատացյալներ:

Նույն օրը, երեկոյան, Ս. Ավետման եկեղեցուն կից սրահում հանդիսավորապես տեղի ունեցավ ժողովի բացումը՝ բոլոր մասնակիցների և բազմաթիվ պետական պաշտոնատարների ներկայությամբ:

Այս առթիվ ընթերցվեցին ուղղափառ և արևելյան ուղղափառ Եկեղեցիների պետերի կողմից ուղարկված ողջույնի խոսքերը: Ողջույնի խոսքով հանդես եկան Նեապոլսի միտրոպոլիտ Տ. Դիոնիսիոս սրբազանը, հյուսիսային Հունաստանի մինիստր Սթիլիանոս Փափաթեմելիսը, ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ պրոֆ. դր. Թոդոր Բաբելը, Տ. Անասթասիոս եպիսկոպոսը՝ հանուն «Առաքելություն և ավետարանչություն աշխարհում» հանձնաժողովի, և Յորգո Լեմոպուլոնը՝ որպես հանձնախմբի քարտուղար:

Նույն օրը, երեկոյան, հանուն Նեապոլսի թեմի, կազմակերպվեց հատուկ հյուրասիրություն՝ ի պատիվ ժողովի բոլոր մասնակիցների:

Երկուշաբթի, ապրիլի 18-ին, առավոտյան, ժողովն սկսեց իր աշխատանքները: Ժողովի ընթացքում առանձին զեկուցումներով հանդես եկան դոկտ. Էոժեն Ը. Սթոքվելը, դոկտ. Հ. Գենադիոս Լիմուրիսը, Հայր Զոզեֆ Զահլևին, Տ. Ստեփան եպիսկոպոսը, պրոֆ. Օլիվիե Կլեմենտը, Տ. Խաժակ վարդապետ Պարսամյանը, Տ. Անաստասիոս եպիսկոպոսը, պրոֆ. Քրիստոս Վանասոսը և ավագ սարկավագ Նազարգինը: Ժողովի երկրորդ օրվա նիստի ատենապետությունը վարեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը:

Ժողովի հիմնական թեմային զուգահեռ, քննարկվեցին նաև «Երիտասարդները իբրև քարոզիչներ» և «Կանանց առաքելությունը աշխարհում» թեմաները: «Կանանց առաքելությունը» թեմայի քննարկման ընթացքում նիստի ատենապետությունը վարեց տիկ. Թեմի Փիրի-Սիմոնյանը, իսկ «Երիտասարդները իբրև քարոզիչներ» թե-

ման քննարկելիս Նիստի ատենապետն էր հայր Ն. Հուդդոնեն:

Այնուհետև ժողովականները բաժանվեցին չորս խմբերի: Առաջին խումբը քննարկեց «Էկումենիզմը այսօր» թեման՝ ատենապետությամբ պրոֆ. Սիզիսի, երկրորդ խումբը՝ «Առաքելություն և միություն» թեման՝ ատենապետությամբ հայր Գուշելի, երրորդ խումբը՝ «Ընկերային ծալքեր քրիստոնեական կյանքում» թեման՝ ատենապետությամբ Տ. Ներսես արքեպիսկոպոսի, չորրորդ խումբը՝ «Համայնքային եկեղեցու դերը ավետարանչության գործում» թեման՝ ատենապետությամբ Տ. Մարկոս Անտոնիոս եպիսկոպոսի:

Վերոհիշյալ չորս խմբերը, իրենց աշխատանքն ավարտելուց հետո, իրենց աշխատանքային փաստաթղթերը ներկայացրին ժողովի ատյանին՝ վերաքննարկման և վավերացման համար:

Ապրիլի 23-ին, շաբաթ օրը, երեկոյան, ժողովն իր աշխատանքները վերջացրեց՝ իր առաջարկությունները ներկայացնելով 1989 թ. Տեխասում (ԱՄՆ) տեղի ունենալիք համագումարի կազմակերպիչների ուշադրությանը:

Ժողովի ութ օրերի ընթացքում բոլոր մասնակիցները վայելեցին Նեապոլսի ժողովրդի և հատկապես թեմի առաջնորդ միտրոպոլիտի՝ Տ. Դիոնիսիոս արքեպիսկոպոսի ջերմ հյուրընկալությունը: Ժողովի մասնակիցները առիթ ունեցան նաև այցելելու հյուսիսային Հունաստանի մինիստր Սթիլիանոս Փափաթեմելիսի պալատը, ուր, ի պատիվ նրանց, տեղի ունեցավ ճոխ հյուրասիրություն՝ սիրալիր մթնոլորտում:

Հայց. Եկեղեցու անունից սույն ժողովին մասնակցում էին Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը, Տ. Վիգեն վարդապետ Այքազյանը և Տ. Խաժակ վարդապետ Պարսամյանը:

ՎԻԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅՔԱԶՅԱՆ